454

1. Սրտանց գոհություն զորության Աստծուն,
Աչքաթող չարեց ապերախտ մարդուն,
Աշխարհ ուղարկեց Իր միակ Որդուն,
Սրտանց գոհություն մեր սիրո Աստծուն:

Սրտանց գոհություն մեր Տեր Հիսուսին,
Որ սարն էր ելնում խաչը Իր ուսին,
Այդ մեր մեղքերն էր տանում Իր ուսին,
Սրտանց գոհություն մեր կյանքի Հույսին:

2. Սրտանց գոհություն Աստծո Որդուն,
Որ անչափ սիրեց մեղավոր մարդուն,
Մեղավոր էինք, գտանք թողություն,
Սրտանց գոհություն, մեր Կյանք, Սրբություն:

3. Սրտանց գոհություն Աստծո Որդուն,
Կյանքն Իրենով է, կտա թողություն,
Կենդանի ջուր է ծարավ սրտերին,
Սրտանց գոհություն խաչյալ Հիսուսին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025